ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
KOTAYK MARZ
MUNICIPALITY OF TSAKHKADZOR

2310 ք. Ծաղկաձոր Օրբելի Եղբ. 10 Tsakhkadzor city Orbeli Br.10
Հեռ.Tel.: (+374 223) 6-04-02, 6-04-03

*18 մայիս 2015թ.* N 121

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Մ. ԳԱՐԵԳԻՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գարեգինյան

Ձեզ եմ ներկայացնում Ծաղկաձոր համայնքի ավագանու 2015 թվականի մայիսի 12-ի թիվ 25, 26-Ն, 27,28-Ն,29 և 30 որոշումները:

Առդիր՝ 7 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատ.՝ Լեյլի Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 մայիս 2015 թվականի թիվ 25**

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի ԹԻՎ 04 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել համայնքի ավագանու 2015 թվականի մայիսի 12-ի թիվ 04 հերթական նիստի օրակարգը:

1. Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 84-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2. Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 13-ի թիվ 05 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

3.Ծաղկաձոր քաղաքի սեփականություն համարվող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գինը սահմանելու մասին:

4. Համայնքային սեփականություն համարվող հողամասը փոխանակելու մասին:

5. CAT և Mercedes-Benz մակնիշի ավտոմեքենաների հրատապ հիմնանորոգում կատարելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 մայիս 2015 թվականի թիվ 26-Ն**

### ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 84-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձորի քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 10-ի "Ծաղկաձոր քաղաքի 2015 թվականի բյուջեի հաստատման մասին" թիվ 84-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Տող1140 -Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար ,,4500.0 հազ.դրամը, փոխարինել 6000.0 հազ. դրամ":

2) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում) հոդված 4267 (Կենցաղային և հանրային սննդի նյութեր) "100.0հազ. դրամը փոխարինել 298.0հազ. դրամ":

3) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում) հոդված 4822 (Այլիարկեր) "0.0հազ. դրամը փոխարինել 13.0հազ. դրամ":

4) Բաժին 1 խումբ 6 դաս 1 (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված4237(Ներկայացուցչական ծախսեր) " 0.0 հազ. դրամը փոխարինել 600,0 հազ. դրամ":

5) Բաժին 5 խումբ 6 դաս 1 (Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)) հոդված 4213 (Կոմունալ ծառայություններ) " 1211.0 հազ. դրամը փոխարինել1900,0 հազ. դրամ":

6) Բաժին 6 խումբ 3 դաս 1 (Ջրամատակարարում) հոդված 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) " 0.0 հազ. դրամը փոխարինել 2000,0 հազ. դրամ":

7) Բաժին 6 խումբ 6 դաս 1 (Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) " 0.0 հազ. դրամը փոխարինել 15000,0 հազ. դրամ":

8) Բաժին 8 խումբ 1 դաս 1 (Հանգստի և սպորտի ծառայություններ) հոդված 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) "102 000.0 հազ. դրամը փոխարինել 72000.0 հազ. դրամ":

9) Բաժին 9 խումբ 1 դաս 1 (Նախադպրոցական կրթություն) հոդված 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) " 7000.0 հազ. դրամը փոխարինել 20000,0 հազ. դրամ":

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -0 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 մայիս 2015 թվականի թիվ 27**

## ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի ԹԻՎ 05 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 13-ի "Ծաղկաձորի համայնքի 2015 թվականի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին" թիվ 05 որոշման հավելված 3-ի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ 3-րդ տողի «67000» թիվը փոխարինել «93000» թվով և <<Ընդամենը>> տողի <<2107900>> թիվը փոխարինել <<2133900>> թվով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 մայիս 2015 թվականի թիվ 28-Ն**

## ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Աճուրդային կարգով օտարել համայնքային սեփականություն համարվող հետևյալ հողամասերը՝

| Հողամասի հասցեն | Չափը | Նպատակային և գործառնական նշանակությունը | Կադաստրային ծածկագիր |
|---|---|---|---|
| ք.Ծաղկաձոր,Խ.Կեչառեցու փողոց թիվ 83 | 0.075հա | բնակավայրերի, խառը կառուցապատման | 07-005-0010-0003 |
| ք.Ծաղկաձոր,Մայիսյան փողոց թիվ 32/1 | 0.019հա | բնակավայրերի, բնակելի կառուցապատման | 07-005-0008-0252 |

2.Հողամասերի մեկնարկային գինը սահմանել դրանց կադաստրային արժեքի հարյուր տոկոսի չափով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## 12 մայիս 2015 թվականի թիվ 29

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թույլատրել համայնքի ղեկավարին քաղաք Ծաղկաձոր, Սարալանջի փողոց թիվ 44 հասցեում գտնվող, <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> փակ բաժնետիրական ընկերության սեփականությունը հանդիսացող 0.0875հա մակերեսով հողամասը փոխանակել քաղաք Ծաղկաձոր, Սարալանջի փողոց թիվ 50/1 հասցեում գտնվող 0.0875 հա մակերեսով հողամասի հետ, որը հանդիսանում է համայնքային սեփականություն:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 մայիս 2015 թվականի թիվ 30**

## CAT ԵՎ MERCEDES-BENZ ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀՐԱՏԱՊ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Կատարել Սարալանջի փողոցի ճանապարհի վերանորոգման աշխատանքների կատարման ընթացքում խափանված CAT և Mercedes-Benz մակնիշի ավտոմեքենաների հրատապ հիմնանորոգման աշխատանքներ՝ նշված ճանապարհի վերանորոգման աշխատանքներն ավարտելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**